ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է
ԵՊՀ գիտական խորհրդի
2022 թ. դեկտեմբեր …. թիվ …. նիստում

_____ Հ. Վ. Հովհաննիսյան

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՂԵԿԱՎԱՐ ՁԵՌՆԱՐԿ

ԵՐԵՎԱՆ 2022

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «*ԵՊՀ մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը*» ղեկավար ձեռնարկը սահմանում է մագիստրոսի ծրագրի կառուցվածքը, ընդհանուր բովանդակությունը, ուսանողի աշխատածավալներն ըստ կիսամյակների, կառուցամասերի և կրթամասերի, ուսումնական աշխատանքի ձևերի, ծրագրի դասընթացների և կրթական ու հետազոտական մոդուլների կազմն ու աշխատածավալները՝ արտահայտված ECTS կրեդիտներով, դրանց իրականացման և գնահատման ժամկետները և այլն:

1.2. Մագիստրոսի առկա և հեռակա ուսուցմամբ կրթական ծրագրերի կառուցվածքը և ուսումնական պլանի ձևաթերթերը (ըստ տևողության) ներկայացված են համապատասխան հավելվածներում:

1.3. Առկա ուսուցմամբ մագիստրոսի ծրագրի տևողությունն ըստ կրեդիտարության կարող է լինել 120 կրեդիտ (2 տարի՝ 4 կիսամյակ), 90 կրեդիտ (1,5 տարի՝ 3 կիսամյակ) և 60 կրեդիտ (1 տարի՝ 2 կիսամյակ): Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 20-շաբաթյա տևողություն, որից 15 շաբաթը հատկացվում է լսարանային պարապմունքներին, 2-ը՝ ընթացիկ քննություններին, իսկ 3-ը՝ քննաշրջանին:

1.4. Հեռակա ուսուցմամբ մագիստրոսի ծրագրի տևողությունը ըստ կրեդիտարության կարող է լինել 120 կրեդիտ (2,5 տարի՝ 5 կիսամյակ), 90 կրեդիտ (2 տարի՝ 4 կիսամյակ)), 60 կրեդիտ (1,5 տարի՝ 3 կիսամյակ): Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 16-շաբաթյա տևողություն, որից 3 շաբաթը հատկացվում է լսարանային պարապմունքներին, 8-ը՝ ինքնուրույն աշխատանքին և խորհրդատվություններին, 2-ը՝ ընթացիկ քննություններին, իսկ 3-ը՝ քննաշրջանին: Առանձին դեպքերում, մասնագիտական առանձնահատկություններից ելնելով, ֆակուլտետի գիտական խորհրդի առաջարկով և ռեկտորի թույլտվությամբ տեսական ուսուցման կազմակերպումը կարող է իրականացվել նաև 12-շաբաթյա ժամանակահատվածում:

1.5. Մագիստրոսի կրթական ծրագրի կառուցման հիմքում դրված է 120 կրեդիտ/90 կրեդիտ/60 կրեդիտ ուսումնական բեռնվածությունը, որն առկա և հեռակա ուսուցման մեկ կիսամյակի համար կազմում է 30 կրեդիտ (10 % թույլատրելի շեղումով): Ուսանողի շաբաթական լրիվ ուսումնական բեռնվածությունը և՛

առկա, և՛ հեռակա ուսուցման դեպքում 1,5 կրեդիտ է (30 կրեդիտ/20 շաբաթ=1,5 կամ՝ 24 կրեդիտ/16 շաբաթ=1,5) կամ 45 ժամ, իսկ ուսումնական կրեդիտի ժամային համարժեքը՝ 1 կրեդիտ = 30 ժամ:

1.6. Առկա ուսուցման մագիստրոսի ծրագրի ուսումնական կառուցամասի դասընթացների լսարանային աշխատանքի ժամաքանակը կազմում է ընդհանուր ժամերի 1/3-ը, իսկ մնացածը նախատեսվում է ուսանողի ինքնուրույն աշխատանքի համար: Օրինակ, եթե որևէ դասընթացի ուսումնական պլանով հատկացված է 3 (6) կրեդիտ աշխատածավալ, որի ժամային համարժեքը կազմում է 90 (180) ժամ, ապա դասընթացին հատկացվող լսարանային աշխատանքի ժամաքանակը 30 (60) ժամ է, իսկ ինքնուրույն աշխատանքինը՝ 60 (120) ժամ: Ըստ այդմ՝ 15-շաբաթյա տեսական ուսուցման պայմաններում այդ դասընթացների շաբաթական լսարանային ժամերը կկազմեն համապատասխանաբար 2 կամ 4 ժամ:

1.7. Հեռակա ուսուցման մագիստրոսի ծրագրի ուսումնական կառուցամասի դասընթացների լսարանային աշխատանքի ժամաքանակը սահմանվում է առկա ուսուցման ձևի լսարանային ժամերի 1/3-ի չափով, իսկ մնացածը նախատեսվում է ուսանողի ինքնուրույն աշխատանքի համար: Օրինակ, եթե որևէ դասընթացի ուսումնական պլանով հատկացված է 3 (6) կրեդիտ աշխատածավալ, որի ժամային համարժեքը կազմում է 90 (180) ժամ, ապա դասընթացին հատկացվող լսարանային աշխատանքի ժամաքանակը կկազմի 10 (20) ժամ, իսկ ինքնուրույն աշխատանքինը՝ 80 (160) ժամ:

2. <u>ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ</u>

2.1. Ուսումնական կառուցամաս

Ծրագրի ուսումնական կառուցամասը բաղկացած է ***ընդհանուր***, ***մասնագիտական*** և ***մասնագիտացման դասընթացների*** կրթամասերից: Վերջինս պարունակում է ինչպես պարտադիր, այնպես էլ կամընտրական դասընթացներ: *Ընդհանուր* կրթամասը ծառայում է մագիստրոսի որակավորման աստիճանի ընդհանուր հենքի (ընդհանրական գիտելիքներ և կարողություններ) ապահովմանը կամ համալրմանը, *մասնագիտական* կրթամասը կոչված է տվյալ մասնագիտության շրջանակներում ապահովելու պահանջվող ընդհանուր գիտելիքներն ու կարողությունները, իսկ *մասնագիտացման* կրթամասը ծրագրի անհատականացված ուսուցման

մասն է, որը նախատեսված է զարգացնելու խորացված գիտելիքներ, կարողություններ և հմտություններ մասնագիտության որևէ նեղ ասպարեզում:

2.1.1. Ընդհանուր դասընթացների կրթամասի աշխատածավալը 2 տարի տևողությամբ մագիստրոսի կրթական ծրագրերի համար 12 կրեդիտ է[1] և ներառում է երեք պարտադիր դասընթաց՝ *Օտար լեզու*[2] (6 կրեդիտ), *Տեղեկատվական տեխնոլոգիաները (ՏՏ) մասնագիտական ոլորտում* (3 կրեդիտ), *Հետազոտության պլանավորում և մեթոդներ* (3 կրեդիտ): Ընդհանուր դասընթացները նպատակաուղղված են ուսանողների ընդհանրական/փոխանցելի գիտելիքների և կարողությունների ձևավորմանը, մասնավորապես՝ օտար լեզվով գրավոր և բանավոր հաղորդակցմանը, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմանը, հետազոտության պլանավորմանը և տարբեր մեթոդների կիրարկմանը:

1,5 տարի տևողությամբ մագիստրոսի կրթական ծրագրերի *ընդհանուր դասընթացների կրթամասի* աշխատածավալը 6 կրեդիտ է և ներառում է երկու պարտադիր դասընթաց՝ *Տեղեկատվական տեխնոլոգիաները (ՏՏ) մասնագիտական ոլորտում* (3 կրեդիտ), *Հետազոտության պլանավորում և մեթոդներ* (3 կրեդիտ):

1 տարի տևողությամբ մագիստրոսի կրթական ծրագրերի *ընդհանուր դասընթացների կրթամասի* աշխատածավալը 6 կրեդիտ է և ներառում է մեկ պարտադիր դասընթաց՝ *Տեղեկատվական տեխնոլոգիաները (ՏՏ) մասնագիտական ոլորտում* (3 կրեդիտ) և մեկ պարտադիր կամընտրական դասընթաց (3 կրեդիտ), որն ընտրում է ուսանողն առաջարկված չորս դասընթացներից: Առաջարկվող կամընտրական դասընթացներն են *Ձեռնարկատիրական գործունեություն, Կարիերայի կառավարում, Հետազոտության պլանավորում և մեթոդներ, Նախագծերի պլանավորում և կառավարում*:

2.1.2. ***Մասնագիտական դասընթացների կրթամասի*** աշխատածավալը 2 տարի տևողությամբ մագիստրոսի կրթական ծրագրերի համար 18 կրեդիտ է և ընդգրկում է *Մասնագիտության արդի հիմնախնդիրներ* (3 կրեդիտ), մեկ 3 կրեդիտ աշխատածավալով և երկու 6 կրեդիտ աշխատածավալով ընդհանուր մասնագիտական դասընթացներ: Այս կրթամասը նպատակաուղղված է մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալման ապա-

[1] 2022/23 ուստարվանից գործում են վերանայված ուսումնական պլանները, որոնց օրինակելի ձևաթերթերը ներկայացված են հավելվածներում:
[2] Անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և ռուսերեն: Լեզվական խմբերը ձևավորվում են ուսանողների դիմում-հայտերի հիման վրա:

հովմանը և մասնագիտության հենքային գիտելիքների ու կարողությունների զարգացմանը:

1,5 տարի տևողությամբ մագիստրոսի կրթական ծրագրի ***մասնագիտական դասընթացների կրթամասի*** *աշխատածավալը* 12 կրեդիտ է և ընդգրկում է 6 կրեդիտ աշխատածավալով երկու ընդհանուր մասնագիտական դասընթաց: Նշված դասընթացներից մեկը պետք է ներկայացվի օտար լեզվով (լեզվի ընտրությունը կատարում է ֆակուլտետը՝ ելնելով մասնագիտական առանձնահատկություններից և առաջնորդվելով ուսանողների լեզվի իմացությամբ):

1 տարի տևողությամբ մագիստրոսի կրթական ծրագրի ***մասնագիտական դասընթացների կրթամասի*** *աշխատածավալը* 39 կրեդիտ է և ընդգրկում է 6 կրեդիտ աշխատածավալով հինգ և 3 կրեդիտ աշխատածավալով 3 ընդհանուր մասնագիտական դասընթաց: Նշված դասընթացներից մեկը պետք է ներկայացվի օտար լեզվով (լեզվի ընտրությունը կատարում է ֆակուլտետը՝ ելնելով մասնագիտական առանձնահատկություններից և առաջնորդվելով ուսանողների լեզվի իմացությամբ):

2.1.3. ***Մասնագիտացման դասընթացների կրթամասի աշխատածավալը*** 2 տարի տևողությամբ մագիստրոսի կրթական ծրագրերի համար 48 կրեդիտ է և բաղկացած է համապատասխանաբար 27 և 21 կրեդիտ աշխատածավալով *պարտադիր* և *կամընտրական* դասընթացներից: Պարտադիր դասընթացների կրթամասը ներառում է 3 երեք կրեդիտանոց և 3 վեց կրեդիտանոց, իսկ կամընտրականը՝ 3 երեք կրեդիտանոց և 2 վեց կրեդիտանոց դասընթացներ[3]: *Պարտադիր* դասընթացներն ապահովում են մագիստրոսի կրթական մակարդակում տվյալ մասնագիտացմամբ պահանջվող խորացված գիտելիքների և կարողությունների, իսկ *կամընտրական դասընթացները* ՝ մագիստրոսական թեզի թեմայով և ուսանողի նեղ մասնագիտական նախասիրություններով պայմանավորված հատուկ գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը: Կամընտրական դասընթացներն ընտրվում են գիտական ղեկավարի հետ խորհրդակցելով՝ տվյալ կամ հարակից (մասնագիտության շրջանակներում միջդիսցիպլինար կապերի ձևավորման նպատակով) մագիստրոսական ծրագրերի դասընթացների առաջարկվող ցանկից: Առաջարկվող կամընտրական դասընթացների թիվը կարող լինել 10-15: Կամընտրական դասընթացներից մեկը (3 կրեդիտ աշխատածավալով) իրականացվում է ավարտական կիսամյակում: Այդ ցանկից ընտրվող դասընթացների ընդհանուր աշխատածավալը կազմում է առնվազն 15 կրեդիտ, իսկ մնացած 6

[3] Տե՛ս համապատասխան ուսումնական պլանների օրինակելի ձևաթերթերը:

կրեդիտը կարող է լրացվել հարակից մագիստրոսական ծրագրերի պարտադիր և կամընտրական դասընթացների ցանկից՝ համապատասխան հիմնավորումով: Կամընտրական դասընթացներն ընտրվում են 1-ին կուրսի 2-րդ կիսամյակում՝ մինչև ապրիլի 1-ը: Դասընթացը կայանում է, եթե ընդգրկված են նվազագույն թվով ուսանողներ (ուսանողների նվազագույն թիվը սահմանվում է ըստ գործող նորմերի):

1,5 տարի տևողությամբ մագիստրոսի կրթական ծրագրի ***մասնագիտացման դասընթացների կրթամասի աշխատածավալը*** 45 կրեդիտ է և բաղկացած է համապատասխանաբար 24 և 21 կրեդիտ աշխատածավալներով *պարտադիր* և *կամընտրական* դասընթացներից: Պարտադիր դասընթացների կրթամասը ներառում է երկու 3 կրեդիտանոց և երեք 6 կրեդիտանոց, իսկ կամընտրականը՝ հինգ 3 կրեդիտանոց և մեկ 6 կրեդիտանոց դասընթացներ: Կամընտրական դասընթացներն ընտրվում են 1-ին կուրսի 1-ին կիսամյակում՝ մինչև դեկտեմբերի 1-ը: Դասընթացը կայանում է, եթե ընդգրկված են նվազագույն թվով ուսանողներ (ուսանողների նվազագույն թիվը սահմանվում է ըստ գործող նորմերի):

2.2. Հետազոտական կառուցվածք

Ծրագրի հետազոտական կառուցվածքի աշխատածավալը 42 կրեդիտ է և ներառում է հետևյալ բաղադրիչները՝ *գիտական սեմինար* (12 կրեդիտ), *մասնագիտական պրակտիկա* (6 կրեդիտ) և *մագիստրոսական թեզ* (24 կրեդիտ):

1,5 տարի տևողությամբ ծրագրերի հետազոտական կառուցվածքի աշխատածավալը 27 կրեդիտ է և ներառում է հետևյալ բաղադրիչները՝ *գիտական սեմինար* (6 կրեդիտ), *մասնագիտական պրակտիկա* (3 կրեդիտ) և *մագիստրոսական թեզ* (18 կրեդիտ):

1 տարի տևողությամբ ծրագրերի հետազոտական կառուցվածքի աշխատածավալը 15 կրեդիտ է և ներառում է հետևյալ բաղադրիչները՝ *մասնագիտական պրակտիկա* (3 կրեդիտ) և *մագիստրոսական թեզ* (12 կրեդիտ):

2.2.1. ***Գիտական սեմինարը*** ֆակուլտետի փորձառու և հետազոտական աշխատանքներում անմիջականորեն ներգրավված պրոֆեսորների կամ դոցենտների կողմից (կազմը՝ 1-3, կրթական ծրագրի ղեկավարի պարտադիր մաս-

նակցությամբ) տվյալ կրթական ծրագրի բոլոր մագիստրանտների համար (1-ին և 2-րդ կուրսերը համատեղ, առավելագույնը՝ 30 ուսանող) իրականացվող սեմինարների շարք է՝ շաբաթական 2 լսարանային ժամ բեռնվածությամբ և դասատախտակով սահմանված գրաֆիկով: Գիտական սեմինարը կազմակերպվում է ուսումնառության 1-4 կիսամյակներում, որոնցից յուրաքանչյուրում դասընթացավար(ներ)ի կողմից սահմանված թվով ելույթների/զեկուցումների ու քննարկումներին ակտիվ մասնակցության համար ուսանողին հատկացվում է 3 կրեդիտ: Գիտական սեմինարների ընթացքում ուսանողներն իրազեկվում են մասնագիտական ոլորտի հիմնախնդիրներին, ֆակուլտետում իրականացվող հետազոտական աշխատանքներին և դրանց արդյունքներին, տեղեկացվում են մագիստրոսական թեզերի ղեկավարների կողմից առաջարկվող հնարավոր թեմաների մասին և խորհրդատվություն տրամադրում դրանց ընտրության հարցում, ցուցաբերվում է գիտական հետազոտություն կատարելու մեթոդաբանական աջակցություն, ձևավորվում և զարգացվում են գիտական հաղորդումներ և զեկուցումներ ներկայացնելու, գիտական բանավեճ վարելու, հարցադրումներ անելու նրանց ունակություններն ու հմտությունները: Ուսանողները հանդես են գալիս մագիստրոսական ատենախոսության շրջանակներում կատարվող հետազոտության վերաբերյալ կարճ զեկուցումներով, մասնավորապես ներկայացնում են իրենց հետազոտության ծրագիրը, մագիստրոսական թեզի հիմնադրույթները, արդյունքները և կատարման ընթացքը/առաջընթացը:

2.2.2. ***Մասնագիտական պրակտիկան*** մագիստրոսական թեզի թեմայի հետ առնչություն ունեցող, հետազոտական հմտությունների ձևավորմանը նպաստող գործնական աշխատանք է, որը կազմակերպվում է 2-րդ, 3-րդ և 4-րդ կիսամյակներում (ըստ տվյալ կրթական ծրագրի հաստատված ուսումնական պլանի): Այն կազմակերպվում է ինչպես ԵՊՀ-ում, այնպես էլ այլ մասնագիտական ուղղվածություն ունեցող ձեռնարկություններում և հաստատություններում՝ 180/90 ժամ ընդհանուր աշխատածավալով (համապատասխանաբար 6/3 կրեդիտ): Մագիստրանտը պրակտիկայի ավարտին թեզի ղեկավարին է ներկայացնում հաշվետվություն: Պրակտիկան գնահատվում է թեզի ղեկավարի կողմից՝ ստուգարքով: Մասնագիտությամբ աշխատող մագիստրանտը կարող է մասնագիտական պրակտիկան անցնել իր աշխատավայրում (ներկայացնելով համապատասխան տեղեկանք), եթե առկա է թեզի ղեկավարի համաձայնությունը: Մասնագիտական պրակտիկան չանցած ուսանողը հեռացվում է ԵՊՀ-ից:

2.2.3. ***Մագիստրոսական թեզը*** մագիստրոսի կրթական ծրագրի անհատական և ամփոփիչ բաղադրիչն է, որի պատրաստումը և պաշտպանությունն առկա ուսուցման դեպքում իրականացվում են 2-րդ, 3-րդ և 4-րդ կիսամյակներում, իսկ հեռակա ուսուցման դեպքում՝ 2-րդից 5-րդ կիսամյակներում (ըստ ուսուցման տևողության)։ Բոլոր ուսանողները մինչև 1-ին (հեռակա 2,5 տարի տևողությամբ ուսուցման դեպքում՝ 2-րդ) կիսամյակի ավարտը պետք է ունենան ուսումնական ստորաբաժանումների գիտական խորհուրդների կողմից հաստատված թեզի թեմաներ և ղեկավարներ։

2.2.4. Մագիստրոսական թեզը կարող են ղեկավարել նաև ՀՀ և արտասահմանյան բուհերի տվյալ ոլորտի առաջատար հրավիրյալ պրոֆեսորներ։ Մագիստրոսական թեզի ձևաչափին և բովանդակությանը ներկայացվող պահանջները սահմանում է ֆակուլտետի գիտական խորհուրդը՝ համաձայն ԵՊՀ ընդհանուր պահանջների։ Թեզի պատրաստման և պաշտպանության համար ծրագրում նախատեսվում է 27, 24 կամ 12 կրեդիտ աշխատածավալ (ըստ ուսուցման տևողության)։

2.2.5. Մագիստրոսական թեզը կարող է իրականացվել նաև տարբեր մասնագիտական ոլորտի երկու տարբեր կրթական ծրագրերում սովորող ուսանողների կողմից (համաձայն՝ ԵՊՀ ռեկտորի 2021 թ. նոյեմբերի 15-ի, թիվ 213/59 հրամանի)։ Այն միջմասնագիտական հետազոտություն է, որը կատարվում է երկու ուսանողների կողմից երկու գիտական ղեկավարների ընդհանուր ղեկավարությամբ և ներկայացվում է պաշտպանության համապատասխան 2 մասնագիտական հանձնաժողովներում։ Միջգիտակարգային թեզը կարող է իրականացվել միևնույն տևողությամբ տարբեր ուսուցման ձև (առկա և հեռակա) ունեցող կրթական ծրագրերում։

2.3. Ծրագրի ավարտական պահանջները

2.3.1. Մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար ԵՊՀ ուսանողը մագիստրոսի ծրագրի կատարման արդյունքում պետք է հաջողությամբ լրացնի 120/90/60 կրեդիտ ուսումնագիտական բեռնվածություն (ըստ հաստատված ուսումնական պլանի)։

3. ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մագիստրոսի ծրագրի բաղկացուցիչ դասընթացների կազմն ու բովանդակությունը, ինչպես նաև դասավանդման, ուսումնառության և գնահատման ձևերն ու մեթոդներն ընտրվում են այնպես, որ բավարարեն ոլորտը կարգավորող հետևյալ պաշտոնական փաստաթղթերի պահանջները.

1. *ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի* մակարդակների նկարագրիչներով մագիստրոսի որակավորման աստիճանի համար սահմանված կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը՝ արտահայտված գիտելիքների, կարողությունների և հմտությունների անհրաժեշտ կազմով[4]:

2. *ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ոլորտային շրջանակի* (առկայության դեպքում) որակավորումների նկարագրիչներով տվյալ մասնագիտությամբ մագիստրոսի որակավորման աստիճանի համար սահմանված կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը՝ արտահայտված գիտելիքների, կարողությունների և հմտությունների անհրաժեշտ կազմով:

3. ԵՊՀ կրթական ծրագրերի մշակման ղեկավար ձեռնարկի[5] և կրթական ծրագրի մասնագրի[6] կազմման պահանջները:

4. Տվյալ մասնագիտական ոլորտում կիրառվող միջազգային ծրագրային կողմնորոշիչները և տարբեր հենանիշները (բենչմարքները), տեղական և գլոբալ մասնագիտական աշխատաշուկայի պահանջները և այլն:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

---

[4] ՀՀ կառավարության 2016 թ. հուլիսի 7-ի N 714-Ն որոշումը ՀՀ որակավորումների ազգային շրջանակը հաստատելու մասին:

[5] ԵՊՀ կրթական ծրագրերի մշակման ղեկավար ձեռնարկ, 2012 թ.:

[6] ԵՊՀ կրթական ծրագրի մասնագրի լրացման ուղեցույց, 2014 թ.:

1. Սույն փաստաթուղթն ուժի մեջ է մտնում 2023 թ. սեպտեմբերի 1-ից և գործում մագիստրոսի պատրաստման բոլոր կրթական ծրագրերի համար։

ՀԱՎԵԼՎԱԾ-1. Առկա ուսուցմամբ մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրի ուսումնական պլանի օրինակելի ձևաթերթ-1 (1 տարի, 60 ECTS)

Թվանիշ	Ուսումնական/հետազոտական մոդուլի անվանումը	Կրեդիտ-ներ	Ուսումնական բեռնվածությունը, ժամ					Կիսամյակներ				Գնահատման ձևը
								1		2		
			Ընդ.	Դասխ.	Գործ./սեմ.	Լաբ.	Ինք.	Կրդ.	Լս.ժ	Կրդ.	Լս.ժ	
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ		45	1350	270	180	0	900	30	20	15	10	
	Ընդհանուր դասընթացներ	**6**	**180**	**30**	**30**	**0**	**120**	**3**	**2**	**3**	**2**	
	Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական ոլորտում	3	90		30		60	3	2			Ստ.
	Կամընտրական դասընթաց	3	90	30			60			3	2	Ստ.
	Մասնագիտական դասընթացներ	**39**	**1170**	**240**	**150**	**0**	**780**	**27**	**18**	**12**	**8**	
	Դասընթաց-1 (Օտար լեզվով դասընթաց)*	6	180	30	30		120	6	4			Քն.
	Դասընթաց-2	6	180	30	30		120	6	4			Քն.
	Դասընթաց-3	6	180	30	30		120	6	4			Քն.
	Դասընթաց-4	6	180	30	30		120	6	4			Քն.
	Դասընթաց-5	3	90	30			60	3	2			Քն.
	Դասընթաց-6	6	180	30	30		120			6	4	Քն.
	Դասընթաց-7	3	90	30			60			3	2	Քն.
	Դասընթաց-8	3	90	30			60			3	2	Քն.
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ		15	450	0	0	0	450	0	0	15	0	
	Մասնագիտական պրակտիկա	3	90				90			3		Ստ.
	Մագիստրոսական թեզ	12	360				360			12		Պաշտ.
ԸՆԴԱՄԵՆԸ		60	1800	270	180	0	1350	30	20	30	10	
Ուսումնական/գիտական մոդուլների քանակը								6		6		12

Ուսուցման շաբաթներ **15**

* Օտար լեզուն ընտրում է կրթական ծրագրի ղեկավարը՝ հաշվի առնելով ուսանողների լեզվական կարողությունները և ծրագրի վերջնարդյունքները:

ՀԱՎԵԼՎԱԾ-2. Առկա ուսուցմամբ մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրի ուսումնական պլանի օրինակելի ձևաթերթ-2 (1,5 տարի, 90 ECTS)

Թվանիշ	Ուսումնական/հետազոտական մոդուլի անվանումը	Կրեդիտ-ներ	Ուսումնական բեռնվածությունը, ժամ					Կիսամյակներ						Գնահատման ձևը	Ուսուցման շաբաթներ
								1		2		3			
			Ընդ.	Դասխ.	Գրք/ա եմ.	Լաբ.	Ինք.	Կրդ.	Լս.ժ	Կրդ.	Լս.ժ	Կրդ.	Լս.ժ		
	ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ	**63**	**1890**	405	225	0	1260	27	18	27	18	9	6		**15**
	Ընդհանուր դասընթացներ	**6**	**180**	**15**	**45**	**0**	**120**	**6**	**4**	**0**	**0**	**0**	**0**		
	Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական ոլորտում	3	**90**		30		60	3	2					Ստ.	
	Հետազոտության պլանավորում և մեթոդներ	3	**90**	15	15		60	3	2					Քն.	
	Մասնագիտական դասընթացներ	**12**	**360**	**60**	**60**	**0**	**240**	**12**	**8**	**0**	**0**	**0**	**0**		
	Դասընթաց-1 (Օտար լեզվով դասընթաց)*	6	**180**	30	30		120	6	4					Քն.	
	Դասընթաց-2	6	**180**	30	30		120	6	4					Քն.	
	Մասնագիտացման դասընթացներ	**45**	**1350**	**330**	**120**	**0**	**900**	**9**	**6**	**27**	**18**	**9**	**6**		
	Պարտադիր	***24***	***720***	***150***	***90***	***0***	***480***	***9***	***6***	***15***	***10***	***0***	***0***		
	Դասընթաց-1	3	**90**	30			60	3	2					Քն.	
	Դասընթաց-2	6	**180**	30	30		120	6	4					Քն.	
	Դասընթաց-3	3	**90**	30			60			3	2			Ստ.	
	Դասընթաց-4	6	**180**	30	30		120			6	4			Քն.	
	Դասընթաց-5	6	**180**	30	30		120			6	4			Քն.	
	Կամընտրական	***21***	***630***	***180***	***30***	***0***	***420***	***0***	***0***	***12***	***8***	***9***	***6***		
	Դասընթաց-1	3	**90**	30			60			3	2			Քն.	
	Դասընթաց-2	3	**90**	30			60			3	2			Քն.	
	Դասընթաց-3	6	**180**	30	30		120			6	4			Քն.	
	Դասընթաց-4	3	**90**	30			60					3	2	Քն.	
	Դասընթաց-5	3	**90**	30			60					3	2	Քն.	
	Դասընթաց-6	3	**90**	30			60					3	2	Քն.	

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ		27	810	0	90	0	720	2	2	2	2	23	2	
	Գիտական սեմինար	6	180		90		90	2	2	2	2	2	2	3 Ստ.
	Մասնագիտական պրակտիկա	3	90				90					3		Ստ.
	Մագիստրոսական թեզ	18	540				540					18		Պաշտ.
ԸՆԴԱՄԵՆԸ		90	2700	405	315	0	1980	29	20	29	20	32	8	
Ուսումնական/գիտական մոդուլների քանակը								7		7		6		20

* Օտար լեզուն ընտրում է կրթական ծրագրի ղեկավարը՝ հաշվի առնելով ուսանողների լեզվական կարողությունները և ծրագրի վերջնարդյունքները:

ՀԱՎԵԼՎԱԾ-3. Առկա ուսուցմամբ մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրի ուսումնական պլանի օրինակելի ձևաթերթ-3 (2 տարի, 120 ECTS)

Թվանիշ	Ուսումնական/հետազոտական մոդուլի անվանումը	Կրեդիտ-ներ	Ուսումնական բեռնվածությունը, ժամ					Կիսամյակներ								Գնահատման ձևը	Ուսուցման շաբաթներ
								1		2		3		4			
			Ընդ.	Դաս.	Գրծ./սեմ.	Լաբ.	Ինք.	Կրդ.	Լս.ժ	Կրդ.	Լս.ժ	Կրդ.	Լս.ժ	Կրդ.	Լս.ժ		
	ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ	**78**	**2340**	465	315	0	1560	27	18	27	18	21	14	3	2		**15**
	Ընդհանուր դասընթացներ	**12**	**360**	**15**	**105**	**0**	**240**	**9**	**6**	**3**	**2**	**0**	**0**	**0**	**0**		
	Մասնագիտական հաղորդակցություն օտար լեզվով-1	3	**90**		30		60	3	2							Ստ.	
	Մասնագիտական հաղորդակցություն օտար լեզվով-2	3	**90**		30		60			3	2					Ստ.	
	Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական ոլորտում	3	**90**		30		60	3	2							Ստ.	
	Հետազոտության պլանավորում և մեթոդներ	3	**90**	15	15		60	3	2							Քն.	
	Մասնագիտական դասընթացներ	**18**	**540**	**120**	**60**	**0**	**360**	**18**	**12**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**		
	Մասնագիտության արդի հիմնախնդիրները	3	**90**	30			60	3	2							Ստ.	
	Դասընթաց-1	3	**90**	30			60	3	2							Քն.	
	Դասընթաց-2	6	**180**	30	30		120	6	4							Քն.	
	Դասընթաց-3	6	**180**	30	30		120	6	4							Քն.	
	Մասնագիտացման դասընթացներ	**48**	**1440**	**330**	**150**	**0**	**960**	**0**	**0**	**24**	**16**	**21**	**14**	**3**	**2**		
	Պարտադիր	***27***	***810***	***180***	***90***	***0***	***540***	***0***	***0***	***24***	***16***	***3***	***2***	***0***	***0***		
	Դասընթաց-1	3	**90**	30			60			3	2					Քն.	
	Դասընթաց-2	3	**90**	30			60			3	2					Քն.	
	Դասընթաց-3	6	**180**	30	30		120			6	4					Քն.	
	Դասընթաց-4	6	**180**	30	30		120			6	4					Քն.	
	Դասընթաց-5	6	**180**	30	30		120			6	4					Քն.	
	Դասընթաց-6	3	**90**	30			60					3	2			Քն.	

	Կամընտրական	*21*	*630*	*150*	*60*	*0*	*420*	*0*	*0*	*0*	*0*	*18*	*12*	*3*	*2*	
	Դասընթաց-1	3	**90**	30			60					3	2			Քն.
	Դասընթաց-2	3	**90**	30			60					3	2			Քն.
	Դասընթաց-3	6	**180**	30	30		120					6	4			Քն.
	Դասընթաց-4	6	**180**	30	30		120					6	4			Քն.
	Դասընթաց-5	3	**90**	30			60							3	2	Քն.
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ		**42**	**1260**	0	120	0	1140	3	2	3	2	9	2	27	2	
	Գիտական սեմինար	12	**360**		120		240	3	2	3	2	3	2	3	2	4 Ստ.
	Մասնագիտական պրակտիկա	6	**180**				180					6	-			Ստ.
	Մագիստրոսական թեզ	24	**720**				720							24	-	Պաշտ.
ԸՆԴԱՄԵՆԸ		**120**	**3600**	**465**	**435**	**0**	**2700**	**30**	**20**	**30**	**20**	**30**	**16**	**30**	**4**	
Ուսումնական/գիտական մոդուլների քանակը								8		7		7		3		**25**

ՀԱՎԵԼՎԱԾ-4. Հեռակա ուսուցմամբ մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրի ուսումնական պլանի օրինակելի ձևաթերթ-4 (1,5 տարի, 60 ECTS կրեդիտ)

Թվանիշ	Ուսումնական/հետազոտական մոդուլի անվանումը	Կրեդիտ-ներ	Ուսումնական բեռնվածությունը, ժամ					Կիսամյակներ			Գնահատման ձևը	Ուսուցման շաբաթներ
								1	2	3		
			Ընդ.	Դասխ.	Գրծ/աեմ.	Լաբ.	Ինք.	Կրդ.	Կրդ.	Կրդ.		
	ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ	**45**	**1350**	85	65	0	1200	21	18	6		**3**
	Ընդհանուր դասընթացներ	**6**	**180**	**5**	**15**	**0**	**160**	**6**	**0**	**0**		
	Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական ոլորտում	3	**90**		10		80	3			Ստ.	
	Կամընտրական դասընթաց	3	**90**	5	5		80	3			Ստ.	
	Մասնագիտական դասընթացներ	**39**	**1170**	**80**	**50**	**0**	**1040**	**15**	**18**	**6**		
	Դասընթաց-1 (Օտար լեզվով դասընթաց)*	6	**180**	10	10		160	6			Քն.	
	Դասընթաց-2	6	**180**	10	10		160	6			Քն.	
	Դասընթաց-3	3	**90**	10			80	3			Քն.	
	Դասընթաց-4	6	**180**	10	10		160		6		Քն.	
	Դասընթաց-5	6	**180**	10	10		160		6		Քն.	
	Դասընթաց-6	6	**180**	10	10		160		6		Քն.	
	Դասընթաց-7	3	**90**	10			80			3	Քն.	
	Դասընթաց-8	3	**90**	10			80			3	Քն.	
	ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ	**15**	**450**	0	0	0	450	0	3	12		
	Մասնագիտական պրակտիկա	3	**90**				90		3		Ստ.	
	Մագիստրոսական թեզ	12	**360**				360			12	Պաշտ.	
	ԸՆԴԱՄԵՆԸ	**60**	**1800**	**85**	**65**	**0**	**1650**	**21**	**21**	**18**		
	Ուսումնական/գիտական մոդուլների քանակը							5	4	3	**12**	

* Օտար լեզուն ընտրում է կրթական ծրագրի ղեկավարը՝ հաշվի առնելով ուսանողների լեզվական կարողությունները և ծրագրի վերջնարդյունքները:

ՀԱՎԵԼՎԱԾ-5. Հեռակա ուսուցմամբ մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրի ուսումնական պլանի օրինակելի ձևաթերթ-5 (2 տարի, 90 ECTS կրեդիտ)

Թվանիշ	Ուսումնական/հետազոտական մոդուլի անվանումը	Կրեդիտ-ներ	Ուսումնական բեռնվածությունը, ժամ					Կիսամյակներ				Գնահատման ձևը
								1	2	3	4	
			Ընդ.	Դասխ.	Գրծ/աեմ.	Լաբ.	Ինք.	Կրդ.	Կրդ.	Կրդ.	Կրդ.	
	ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ	63	1890	135	75	0	1680	21	21	18	3	
	Ընդհանուր դասընթացներ	**6**	**180**	**5**	**15**	**0**	**160**	**6**	**0**	**0**	**0**	
	Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական ոլորտում	3	90		10		80	3				Ստ.
	Հետազոտության պլանավորում և մեթոդներ	3	90	5	5		80	3				Քն.
	Մասնագիտական դասընթացներ	**12**	**360**	**20**	**20**	**0**	**320**	**12**	**0**	**0**	**0**	
	Դասընթաց-1 (Օտար լեզվով դասընթաց)*	6	180	10	10		160	6				Քն.
	Դասընթաց-2	6	180	10	10		160	6				Քն.
	Մասնագիտացման դասընթացներ	**45**	**1350**	**110**	**40**	**0**	**1200**	**3**	**21**	**18**	**3**	
	Պարտադիր	***24***	***720***	***50***	***30***	***0***	***640***	***3***	***21***	***0***	***0***	
	Դասընթաց-1	3	90	10			80	3				Ստ.
	Դասընթաց-2	6	180	10	10		160		6			Քն.
	Դասընթաց-3	6	180	10	10		160		6			Քն.
	Դասընթաց-4	6	180	10	10		160		6			Քն.
	Դասընթաց-5	3	90	10			80		3			Քն.
	Կամընտրական	***21***	***630***	***60***	***10***	***0***	***560***	***0***	***0***	***18***	***3***	
	Դասընթաց-1	3	90	10			80			3		Քն.
	Դասընթաց-2	3	90	10			80			3		Քն.
	Դասընթաց-3	3	90	10			80			3		Քն.
	Դասընթաց-4	3	90	10			80			3		Քն.
	Դասընթաց-5	6	180	10	10		160			6		Քն.
	Դասընթաց-6	3	90	10			80				3	Քն.
	ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ	27	810	0	30	0	780	0	2	5	20	

Ուսուցման շաբաթներ **3**

	Գիտական սեմինար	6	**180**		30		150		2	2	2	3 Ստ.
	Մասնագիտական պրակտիկա	3	**90**				90			3		Ստ.
	Մագիստրոսական թեզ	18	**540**				540				18	Պաշտ.
ԸՆԴԱՄԵՆԸ		**90**	**2700**	**135**	**105**	**0**	**2460**	**21**	**23**	**23**	**23**	
Ուսումնական/գիտական մոդուլների քանակը								5	5	7	3	**20**

* Օտար լեզուն ընտրում է կրթական ծրագրի ղեկավարը՝ հաշվի առնելով ուսանողների լեզվական կարողությունները և ծրագրի վերջնարդյունքները:

ՀԱՎԵԼՎԱԾ-6. Հեռակա ուսուցմամբ մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրի ուսումնական պլանի օրինակելի ձևաթերթ-6 (2,5 տարի, 120 ECTS կրեդիտ)

Թվանիշ	Ուսումնական/հետազոտական մոդուլի անվանումը	Կրեդիտ-ներ	Ուսումնական բեռնվածությունը, ժամ					Կիսամյակներ					Գնահատման ձևը	Ուսուցման շաբաթներ
								1	2	3	4	5		
			Ընդ.	Դասխ.	Գրծ./աեմ.	Լաբ.	Ինք.	Կրդ.	Կրդ.	Կրդ.	Կրդ.	Կրդ.		
	ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ	**78**	**2340**	155	105	0	2080	21	21	21	15	0		**3**
	Ընդհանուր դասընթացներ	**12**	**360**	**5**	**35**	**0**	**320**	**9**	**3**	**0**	**0**	**0**		
	Մասնագիտական հաղորդակցություն օտար լեզվով-1	3	**90**		10		80	3					Ստ.	
	Մասնագիտական հաղորդակցություն օտար լեզվով-2	3	**90**		10		80		3				Ստ.	
	Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական ոլորտում	3	**90**		10		80	3					Ստ.	
	Հետազոտության պլանավորում և մեթոդներ	3	**90**	5	5		80	3					Քն.	
	Մասնագիտական դասընթացներ	**18**	**540**	**40**	**20**	**0**	**480**	**12**	**6**	**0**	**0**	**0**		
	Մասնագիտության արդի հիմնախնդիրները	3	**90**	10			80	3					Ստ.	
	Դասընթաց-1	3	**90**	10			80	3					Քն.	
	Դասընթաց-2	6	**180**	10	10		160	6					Քն.	
	Դասընթաց-3	6	**180**	10	10		160		6				Քն.	
	Մասնագիտացման դասընթացներ	**48**	**1440**	**110**	**50**	**0**	**1280**	**0**	**12**	**21**	**15**	**0**		
	Պարտադիր	***27***	***810***	***60***	***30***	***0***	***720***	***0***	***12***	***15***	***0***	***0***		
	Դասընթաց-1	3	**90**	10			80		3				Քն.	
	Դասընթաց-2	3	**90**	10			80		3				Քն.	
	Դասընթաց-3	6	**180**	10	10		160		6				Քն.	
	Դասընթաց-4	6	**180**	10	10		160			6			Քն.	
	Դասընթաց-5	6	**180**	10	10		160			6			Քն.	
	Դասընթաց-6	3	**90**	10			80			3			Քն.	
	Կամընտրական	***21***	***630***	***50***	***20***	***0***	***560***	***0***	***0***	***6***	***15***	***0***		
	Դասընթաց-1	3	**90**	10			80			3			Քն.	
	Դասընթաց-2	3	**90**	10			80			3			Քն.	

	Դասընթաց-3	6	**180**	10	10		160				6		Քն.
	Դասընթաց-4	6	**180**	10	10		160				6		Քն.
	Դասընթաց-5	3	**90**	10			80				3		Քն.
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ		**42**	**1260**	0	40	0	1220	3	3	3	9	24	
	Գիտական սեմինար	12	**360**		40		320	3	3	3	3		4 Ստ.
	Մասնագիտական պրակտիկա	6	**180**				180				6		Ստ.
	Մագիստրոսական թեզ	24	**720**				720					24	Պաշտ.
ԸՆԴԱՄԵՆԸ		**120**	**3600**	**155**	**145**	**0**	**3300**	**24**	**24**	**24**	**24**	**24**	
Ուսումնական/գիտական մոդուլների քանակը								7	6	6	5	1	**25**